

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՃԱՄԲԱՐԱԿ
ՄԱՐԶ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Պատմական աղբյուրները հավաստում են, որ համայնքն ընդգրկող ողջ այս տարածքը հնուց ի վեր եղել է Մեծ Հայքի Ուտիք, ըստ այլ տեղեկությունների՝ Արցախ աշխարհի Գարդման գավառի մի մաս: Հնուց ի վեր լինելով զուտ հայաբնակ ու էթնիկ միատարր տարածք, պատմության ընթացքում այն դարձել էր մի քանի ազգերի ու ազգությունների խառնարան:

Դարերի ընթացքում օտարազգի տարրի հայտնվելն այստեղ թուրք-սելջուկների (11-րդ դար), թաթար-մոնղոլների (1236թ.), Լենգ-Թեմուրի (1386թ.), վերջինիս մահից հետո կարակոնյուլու ակկոնյուլու թուրքմենական ցեղերի ավերիչ արշավանքների և հատկապես՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի դաժան գերիշխանության օրոք հայակործան քաղաքականության, ռուս-պարսկական պատերազմների պատմաժողովրդագրական տեղաշարժումների հետևանք է:

Պատմական այս իրողությունների հետևանքով երբեմնի հայաշունչ այս տարածքում աստիճանաբար վերացան հնամենի հայկական բնակավայրեր, եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ, պատմամշակութային արժեք ներկայացնող հնավայրեր ու կառույցներ, այս ավերումներն կապված են նաև 12-րդ դարի վերջին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետ: Հայկական գյուղերը, որոնք գտնվում էին գեղատեսիլ վայրերում և հարուստ էին բնական պաշարներով, բռնի հայաթափվելուց հետո բնակեցվում էին թուրք-թաթարական ծագում ունեցող տարբեր քոչվոր ցեղախմբերով: Հայկական շատ տեղանուններ ձևափոխվում էին գերիշխող ցեղախմբի կամ ազգի լեզվին ու բարբառին համահունչ: Հայկական հին գյուղատեղերում ծնունդ առան օտարահունչ անուններով և մահմեդական բնակիչներով նոր գյուղեր: Հայրենիքի այս հատվածում հայերի կրկին վերահաստատվելը և ռուս վերաբնակիչների երևան գալը ուղղակիորեն պայմանավորված է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու (1828թ.), հետագայում՝ (1849թ., 1868թ.) ցարական կառավարության կողմից մի շարք վարչական և ագրարային (1870թ.) բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև նոր միացված տարածքների անվտանգությունն ապահովելու, սահմանամերձ գոտին ռուսական տարրով ամրապնդելու հանգամանքներով:

1988թ. Սուվգայիթում և 1990թ. Բաքվում հայերի կոտորածները, Ադրբեջանում բնակվող հայերի բռնի տեղահանությունը հանգեցին ազգամիջյան փոխհարաբերությունների սրման և լարվածության, շրջանում բնակվող ադրբեջանցիները (կարծեցյալ հատուցման վախից) տեղափոխվեցին Ադրբեջան, ընդ որում՝ ունեցվածքով հանդերձ ու անվտանգ: Մինչդեռ հայերը Ադրբեջանից Հայաստան էին հասնում մահվան աչքերին նայելով, ֆիզիկական և հոգեկան խոշտանգումների ենթարկված, ստորացված և թալանված: Հազարավոր փախստականներ մշտական բնակություն հաստատեցին Կրասնոսելսկի շրջանում, մասնավորապես՝ նախկին ադրբեջանաբնակ գյուղերում, նոր կյանք անուն տալով նրանց կամ վերակենդանացնելով բնակավայրերի հայկական նախկին անունները: Այգուտ,

Անտառամեջ, Արծվաշեն, Բարեպատ, Գետիկ, Դպրաբակ, Թթուջուր, Կալավան, Ձորավանք, Ճամբարակ, Մարտունի, Վահան բնակավայրերի այս համաստեղությամբ, ժողովրդագրական պատկերը արմատապես փոփոխված, երբեմնի Կրասնոսելսկի շրջանը լուծարվեց և դարձավ ՀՀ Գեղարքունիքի մարզի մի մասը հյուսիս-արևելքում, իբրև սահմանամերձ գոտի՝ իր վրա կրելով ինչպես 1992-1994թթ. պատերազմական գործողությունների, այնպես էլ նոր կարգավիճակի և հետագա զարգացումների կնիքն ու հետևանքները:

Ճամբարակ քաղաքը ձևավորվել է երեք բնակավայրերի միացումից, դրանք են Կրասնոսելսկը, Վերին Ճամբարակն ու Ներքին Ճամբարակը: Կրասնոսելսկի նախկին անվանումներից են եղել՝ Միխայլովկան, Կարմիրը և Կրասնոսելսկը: Միխայլովկա գյուղը հիմնադրվել է 1740-1785թվականներին Ռուսաստանի՝ Սամարայի և Սարատովի նահանգներից վերաբնակեցված Մոլականների կողմից: Մինչև 1988-1989թվականները բնակչության հիմնական մասը կազմել են հայերը, ռուսները (մալականներ), ադրբեջանցիները, քրդերը, մորդովացիներ: Շրջանում բնակվող ադրբեջանցիների հեռանալուց հետո նրանց փոխարեն վերաբնակվեցին Արծվաշենից, Բաքվից, Կիրավաբադից, Սումգայիթից, Շամխորից և Ադրբեջանի այլ շրջաններից տեղահանված փախստական հայեր: Միջին հեռավորությունը ՀՀ պետական սահմանից 1.5կմ է, 15 կմ երկարությամբ սահմանակից է Ադրբեջանի հետ:

Վահան գյուղի բնակչության թիվը՝ 1015: Վահանը / նախկին Կրասնոսելսկի շրջան, գ.Ռուբենակերտ, գ.Օրջոնիկիձե/ հիմնադրվել է 1925թ: Համայնքը Վահան է վերանվանվել 1991թ.-ին: Գտնվում է Հայաստանի հյուսիս արևելյան հատվածում: Բարձր լեռնային է, բարձրությունը ծովի մակարդակից 2000 մ. է: Միջին հեռավորությունը ՀՀ պետական սահմանից 1.5կմ է, 27 կմ երկարությամբ սահմանակից է Ադրբեջանի հետ:

Թթուջուր գյուղի բնակչության թիվը՝ 1038: Թթուջուրը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում՝ Գետիկ գետի աջ ափին, ծովի մակարդակից 1850-1950մ բարձրության վրա: Բնակավայրը բնակեցվել է մինչև 1920թ: Բնակավայրի կենտրոնում կա հանքային ջուր, որից ծագել է գյուղի անունը: Թթուջուրը գտնվում է հանրապետական նշանակության Ճամբարակ-Բերդ և Ճամբարակ-Իջևան-Դիլիջան ավտոճանապարհների խաչմերուկում: Միջին հեռավորությունը ՀՀ պետական սահմանից 2.5կմ է, 5 կմ երկարությամբ սահմանակից է Ադրբեջանի հետ:

Գետիկ գյուղի բնակչության թիվը՝ 458: Գետիկ բնակավայրը հիմնադրվել է 1923թ: Բնակիչները՝ ընդամենը 20-30 ընտանիք, եկել են Արծվաշեն գյուղից և հիմնադրել Գետիկ գյուղը: Գյուղը գտնվում է Միափորի և Արեգունի լեռների միջև, Գետիկ գետի հովտում, ծովի մակարդակից 1820 մ բարձրության վրա:

Մարտունի գյուղի բնակչության թիվը՝ 561, 1921թ գարնանը Ալեքսան Տեր-Նիկողոսյանի գլխավորությամբ Մեծ Եղեռնից վերապրած 12 գաղթական ընտանիքներ, թվով 40 մարդ, Կրասնոսելսկ ավանից ոչ հեռու՝ Գետիկ գետի անտառաշատ ափին, հիմնադրում են Մարտունի գյուղը : 1921- 23թթ գյուղը համալրվում է նոր գաղթական ընտանիքներով: 1993թ բարերար Շավարշ Խաչատրյանի նախաձեռնությամբ ու միջոցներով կառուցվել է Սուրբ Ստեփանոս մատուռը:

Այգուտ (Գյուլքենդ), գյուղի բնակչության թիվը՝ 901: Այգուտ գյուղը գտնվում է Միափորի լեռների հարավային լանջին, Գետիկի հովտում: Այգուտ է վերանվանվել 1991 թվականի ապրիլի 3-ին: Տեղակայված է ծովի մակերևույթից 1420 մետր բարձրության վրա:

Դպրաբակ գյուղի բնակչության թիվը՝ 552: Դպրաբակ բնակավայրը տեղակայված է Գետիկ գետի ստորին հոսանքի ձախ կողմում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1240 մ բարձրության վրա: Նախկինում անվանում էին Չայքենդ, վերանվանվել է Դպրաբակ՝ 03.04.1991թ: Հիմնադրվել է 1778 թվականին: 1988 թ վերաբնակեցվել է Ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստականներով: Դպրաբակ տանող ճանապարհից դեպի աջ կա 19-րդ դարի կամուրջ: Գյուղից 4 կմ հվ-արմ, անտառի մեջ՝ Այրիջուր կոչված հանդամասում, կան գյուղատեղի, խաչարձան, խաչքարեր՝ 12-13-րդ դարերի արձանագրություններով: Գյուղն ունի կիսավեր եկեղեցի՝ 17-18-րդ դարերում թվագրվող:

Ձորավանք գյուղի բնակչության թիվը՝ 190: Ձորավանքը տեղակայված է Գետիկ գետի ձախ ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1150 մ բարձրության վրա: Նախկինում անվանում էին Ղարադայա, վերանվանվել է Ձորավանք 03.04.1991թ: Հիմնադրվել է 1800 - ականներին: 1988 թ վերաբնակեցվել է Ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստականներով: Գյուղից 1.5 կմ հարավ-արևմուտք կա գյուղատեղի՝ 10-12-րդ դարերում թվագրվող, եկեղեցի՝ 10-13-րդ դարերի, խաչքարերով զերեզմանոց՝ 10-18-րդ դարերի:

Կալավան գյուղի բնակչության թիվը՝ 206: Կալավանը տեղակայված է Բարեբեր գետի ափին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Նախկինում անվանում էին Ամրիսեր, վերանվանվել է Կալավան 03.04.1991թ: Հիմնադրվել է 1800 - ականներին: 1988 թ վերաբնակեցվել է ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստականներով: Բնակավայրի շրջակայքում կան դամբարանադաշտեր Կալավան -1, Կալավան - 2 / մ.թ.ա. 3-րդ,-2-րդ, 2-րդ- 1-ին հզմ. / խաչքարերով զերեզմանոց՝ 14-17-րդ դդ, 2,5 կմ հվ. կա քարե դարի բացօթյա կայան: Այս կայանները Անդրկովկասի կարեւորագույն տեղեկություններ տվող հնագիտական հուշարձաններից են: Կալավան 1 և Կալավան 2 հնագիտական հուշարձանները վերաբերում են Հին քարե դարին: Կալավան 1 հուշարձանը թվագրվում է 14-րդ հազարամյակով, իսկ Կալավան 2-ը՝ 34 200 տարեկան է: Կալավանի կազմում է գտնվում Բարեպատ բնակավայրը:

Անտառամեջ գյուղի բնակչության թիվը՝ 167: Անտառամեջ բնակավայրը տեղակայված է Գետիկ գետի ձախ կողմում, մարզկենտրոնից 110 կմ հեռավորության վրա: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1575 մ բարձրության վրա: Նախկինում անվանում էին Մեշաքենդ, որը վերանվանվել է Անտառամեջ 03.04.1991թ: Հիմնադրվել է 1850 – ական թվականներին: 1988թ վերաբնակեցվել է Ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստական հայ ընտանիքներով:

Արծվաշենը Հայաստանի Հանրապետության Էքսկլավն է Ադրբեջանի Հանրապետության տարածքում /40 քառակուսի կմ/: Գյուղը հիմնադրվել է 1859թ.: Նախքան Արծվաշեն անվանվելը գյուղն ունեցել է Բաշ գյուղ, Բաշքենդ անունները: 1992 թվականի օգոստոսի 8-ից մինչ օրս բռնազավթված է Ադրբեջանի զինված ուժերի կողմից: Արծվաշեն համայնքից բռնի տեղահանված ընտանիքների թիվը ներկայումս կազմում է 719, որոնցից 664 ընտանիքներ բնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակավայրերում և 55 ընտանիքներ այլ մարզերի բնակավայրերում և արտերկրներում: Գյուղն ունեւր 2730 բնակիչ(1992թ):

Ճամբարակ համայնքը կազմավորվել է „Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին,, ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93-Ն կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Գեղարքունիքի

մարզի Ճամբարակ քաղաքային, Այգուտ, Անտառամեջ, Գետիկ, Դպրաբակ, Թթուջուր, Կալավան, Չորավանք, Մարտունի, Վահան գյուղական համայնքների և Արծվաշեն(1992թ.օգոստոսի 8-ից օկուպացվել է Ադրբեջանի կողմից) բնակավայրի միավորումից :
Համայնքի կենտրոնը Ճամբարակ քաղաքն է :

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելքում, Արեգունի և Միափորի լեռների միջև: Այն գտնվում է ծովի մակարդակից 1200-1850մ բարձրության վրա: Արեւելքից սահմանակից է Ադրբեջանի հանրապետությանը, հարավից՝ Շողակաթ համայնքին, հյուսիսից եւ արեւմուտքից՝ ՀՀ Տավուշի մարզին: Ճամբարակ համայնքը հանրապետական նշանակության ճանապարհներով կապված է մայրաքաղաքի, մարզկենտրոնի, մյուս մարզերի ու համայնքների հետ: Այն գտնվում է մայրաքաղաքից 120 կմ., մարզկենտրոնից՝ 100 կմ., Երևան-Սոթք երկաթուղուց՝ 18 կիլոմետր հեռավորությամբ:

Մակերևույթը լեռնային է՝ կտրված Գետիկ գետով և նրա վտակներով: Տարածքում կան քրոմի, գրանիտի, բազալտի հրակայուն կավի հանքավայրեր: Լանդշաֆտը լեռնաանտառային, լեռնատափաստանային և լեռնամարգագետնային է, կլիման՝ բարեխառն:

Տնտեսության հիմնական ճյուղերն են՝ անասնաբուծությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը, հողագործությունը՝ կարտոֆիլի, բանջարաբուստանային և հացահատիկային կուլտուրաների մշակությունը:

Համայնքում գործում է 1 առողջության կենտրոն, 1 բուժամբուլատորիա, թերապևտիկ և ռենտգենաբանական ստոմոտոլոգիական կլինիկա, 7 բուժկետ տասներկու հանրակրթական դպրոց, մարզադպրոց, 4 մանկապարտեզ, մանկական երաժշտական և գեղարվեստի դպրոցները, կենտրոնական գրադարանը, մշակույթի տունը:

Համայնքում գործում են նաեւ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, իրավապահայան կառույցները, մասնավոր ընկերություններ եւ ձեռնարկություններ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	608
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին ($^{\circ}\text{C}$)	- 5.1
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին ($^{\circ}\text{C}$)	+14.5

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից		
1.1) Վահան	6	
1.2) Թթուջուր	7	
1.3) Գետիկ	12	
1.4) Մարտունի	15	
1.5) Այգուտ	20	
1.6) Դպրաբակ	26	
1.7) Կալավան	35	
1.8) Ձորավանք	30	
1.9) Անտառամեջ	37	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կրասնոսելսկ	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	120	
3.2) մարզկենտրոնից (կմ)	100	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	1.5	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)		
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	42	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	18	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1150-2000	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	417.6	41765.7
6. Սահմանակից համայնքների անվանումները	Արեւելքից սահմանակից է Ադրբեջանի հանրապետությանը, հարավից՝ Շոդակաթ համայնքին, հյուսիսից եւ արեւմուտքից՝ ՀՀ Տավուշի մարզին	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	chambarak.gegharquniq@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.chambarak.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	094-67-54-75	

10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	(0265)2 22 55
11. Համայնքի հեռախոսային կոդը	0265
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1301
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	11993
2. Գրանցված ծնունդների քանակը	92
2. Մահացության դեպքերի քանակը	105
3. Ամուսնությունների քանակը	44
4. Ամուսնալուծությունների քանակը	5
5. Տնային տնտեսությունների թիվը	3200
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	611
7. Կենսաթոշակառուների քանակը	2621
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	865

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	4
5. Հանրակրթական դպրոցների քանակը	12
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	269400
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	26
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	4200

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	9708
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	27134
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1044.03
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	7202
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	6772
7. Խոզերի գլուխաքանակը	954
8. Գյուղատնտեսական տեխնիկա	125
8.1 տրակտորներ (քանակը)	110
8.2 կոմբայններ (քանակը)	2
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	3200

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	80
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	63.7
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	50
6.2 Էքսկավատորների քանակը	7
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	45
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	1

9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
---	-----

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. Դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	353421.9	358878.9
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	48098.3	45944.7
2.1 հողի հարկ	20907.5	16964.8
2.2 գույքահարկ	27190.8	28979.9
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	228031.9	228031.9
3.1 դոտացիա	226164.8	226164.8
3.2 սուբվենցիա	1867.1	1633.6
4. Մուտքեր հողի օտարումից	16500.0	442.7

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. Դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	312638.0	302586.3

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. Դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	83292.9	83283.9

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. Դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	103.46.0	102828.7

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	41
1.1 համայնքային ծառայողներ	24
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. Դրամ)	87211.1
3. Ավագանու անդամների թվաքանակը	9

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Միջբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակ	Հնարավոր է միայն պետության աջակցությամբ:
Համայնքում ջրամատակարարման համակարգերի անբարեկարգ վիճակ	Համայնքի բյուջե և պետության կողմից տրամադրվող սուբվենցիա:
Գործազրկության բարձր մակարդակ	Համայնքում արտադրամասերի և ծառայությունների հիմնում առկա ռեսուրսների հիման վրա:
Փողոցների գիշերային լուսավորության համակարգերի ընդլայնում վերակառուցում	Համայնքի բյուջե և պետության կողմից տրամադրվող սուբվենցիա:
Ենթակառուցվածքների բարելավում	Ներդրումային և դրամաշնորհային ծրագրերի իրականացում, համայնքային բյուջեի միջոցներ
Խաղա և մարզա հրապարակների բարեկարգում, կառուցում	Ներդրումային ծրագրերի իրականացում
Բնակարանային ֆոնդի պահպանություն	Հրատապ ծրագրերի իրականացում,
Սելավատարների մաքրում և սողանքային երևույթների կանխում	Հրատապ ծրագրերի իրականացում
Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում	Պետություն-մասնավոր հատված համագործակցություն
Զբոսաշրջության զարգացման խթանում, ենթակառուցվածքների ստեղծում	Պետություն-մասնավոր հատված համագործակցություն,